ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 մարտի 2015 թվականի N 38-Ա

<<ԳՈՐԱՅՔԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-Ի N122-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի, 67-րդ հոդվածի 1-ին կետի <<ա>> և <<ը>> ենթակետերով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N41- Ա որոշման 1-ին կետի, ***որոշում եմ՝***

1. <<Գորայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության 1,710,000 Հայաստանի Հանրապետության դրամ կազմող կանոնադրական կապիտալը նվազեցնել 840,000 Հայաստանի Հանրապետության դրամով՝ հասարակ (սովորական) բաժնետոմսի քանակի պակասեցմամբ: Արդյունքում ընկերության կանոնադրական կապիտալը կկազմի 870,000 ՀՀ դրամ, որը կազմում է 870 հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1000 Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2007 թվականի հունիսի 7-ի <<Գորայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հիմնադրման մասին>> N122-Ա որոշմամբ հաստատված <<Գորայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2. կետը հաստատել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Հանձնարարել <<Գորայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ ապահովել կանոնադրության փոփոխության պետական գրանցումը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

4. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թ. մարտի 24
ք. Կապան

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
Սյունիքի մարզպետի 2015թվականի
մարտի 24-ի թիվ. 38- Ա որոշմամբ
ՀՀ Սյունիքի մարզպետ՝

Կազմված է 24.03.2015թ. բաղկացած է 1 թերթից
ՕՐԻՆԱԿ - -
ԳՐԱՆՑՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿՈՂՄԻՑ 31.07.2007թ..
Գրանցման թիվ- 222.120.00768
Վկայական 03 Ա 076978
ՀՎՀՀ 09810233
31.07.2007թ. գրանցված կանոնադրության
Թիվ - - - - փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից
« » ---------- 2015թ

«ԳՈՐԱՅՔԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ »
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ա Ն
/ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ/

1). Ընկերության կանոնադրության 4.2 կետի 1-ին պարբերությունը կարդալ հետևյալ նոր խմբագրությամբ.

1. «Գորայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 870000 Հայաստանի Հանրապետության դրամ, որը կազմում է 870 հասարակ (սովորական) բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1000 դրամ:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է «Գորայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 31.07.2007թ գրանցված կանոնադրության բաղկացուցիչ մասը: